



Project funded by the European Union

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից



մարզ _____

քաղաք/գյուղ _____

դպրոց/դասարան _____

աշխակերտ _____

Սիրելի

ՄԱՅՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻ:

ԿԱՐԴԱ՝ ԵՎ ԳՈՐԾԻՐ

ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՂԲ ՉԿԱ: Աղբը ստեղծում են մարդիկ

Առաջ, երբ մոլորակի բնակչության թիվը փոքր էր ու չկային արհեստական նյութերից իրեր՝ պլաստիկ շշեր, հին հեռուստացույց, կոտրված խաղալիքներ, փչացած համակարգիչ, մոլորակի վրա շատ աղբ չէր կուտակվում, և բնությունը հասցնում էր քայքայել ու մարսել այդ աղբը՝ այն ներառելով բնական շրջապտույտի մեջ:

Այսօր, երբ աղբի ծավալները զգալիորեն աճել են, բնությունն այլևս չի հասցնում յուրացնել աղբը, արդյունքում մենք ունենում ենք կեղտոտ օդ, աղտոտված անտառներ, օվկիանոսներ, հիվանդ կենդանիներ, բնական աղետներ:

Յուրաքանչյուր անցանկալի, անպետք բան, որ դեն ենք նետում, անվանում ենք աղբ կամ թափոն: Թափոնները կարող են լինել հեղուկ, գազային կամ պինդ: Առաջին երկուսը ընդունված է անվանել արտահոսք կամ արտանետումներ, իսկ վերջինը՝ կոշտ թափոններ կամ պարզապես աղբ: Կոշտ թափոնները լինում են բնության մեջ քայքայվող (օրինակ՝ կերակրի մնացորդներ, փչացած միրգ և բանջարեղեն, տերևներ, գոմաղբ, թուղթ և այլն), կամ բնության մեջ չքայքայվող (մետաղներ, ապակի, պոլիէթիլեն, ռետին և այլն):

Տես, թե որքան ժամանակում են քայքայվում աղբի այս տեսակները, երբ հայտնվում են բնության մեջ:



Բանան

3-4 շաբաթ

Թղթե տոպրակ

1 ամիս

Բամբակյա գործվածքի կտոր

5 ամիս



Բրդյա գուլպա

1 տարի

Ծխախոտի մնացորդ

2-5 տարի

Կաշվե կոշիկ

40-50 տարի

Թիթեղյա տուփ

80-100 տարի

Ալյումինե դատարկ աման

200-500 տարի



Պլաստիկ տարա

անհայտ է



Աղյուսակում տեսնում ենք, որ պլաստիկ նյութերից բաղկացած աղբը՝ շերտ, պոլիէթիլենային տոպրակները բնության մեջ չեն քայքայվում և բացի շրջակայքը տգեղացնելուց, ավելի մեծ վտանգ է պարունակում՝ արևի ազդեցության տակ աղբավայրում ինքնայրվելով արտազատում է թունավոր նյութեր՝ դիօքսին և ֆուրան:

Դիօքսինը թույն է, որը ծխի հետ մթնոլորտում տարածվելով իր ճանապարհին աղտոտում է ամեն ինչ, հսկայական տարածքներ դարձնելով վտանգավոր մարդկանց ու կենդանիների համար: Դիօքսինով աղտոտված օդը շնչելիս կամ դիօքսինով վարակված սնունդ օգտագործելիս, օրինակ՝ աղբակույտում արածող կովի կաթը խմելիս, կարող են առաջանալ մահացու հիվանդություններ:

Դու կարող ես նպաստել, որ չքայքայվող պլաստիկ թափոնները չհայտնվեն բնության մեջ և մեր Երկիր մոլորակը ժպտա:

Ինչպե՞ս՝

- Թույլ մի՛ տուր, որ ձեր տանը կամ բակում պլաստիկ շշերն ու պոլիէթիլենային տոպրակները այրեն: Մեծերին բացատրի՛ր, որ այրվելիս դրանք արտազատում են մահացու թույներ:
- Պլաստիկ թափոնները մի՛ նետիր մյուս աղբի հետ, չէ՛ որ հայտնվելով աղբավայրում, ինքնայրման պատճառով արտանետում են մահաբեր դիօքսին: Առանձնացրու պլաստիկ թափոնները հատուկ աղբամաններում, որտեղից դրանք կտարվեն վերամշակման:
- Մեկանգամյա օգտագործման առարկաների փոխարեն աշխատեք օգտագործել բազմակի օգտագործման իրեր ու առարկաներ, որոնք պատրաստված են ավելի կայուն նյութերից (օրինակ՝ պլաստիկ ամանեղենի փոխարեն օգտագործեք ապակե կամ կերամիկական ամանեղեն):
- Խանութ կամ շուկա գնալիս ձեզ հետ տարեք կտորե կամ այլ նյութից պատրաստված բազմակի օգտագործման տոպրակներ՝ մի քանի մեկանգամյա պոլիէթիլենային տոպրակներ օգտագործելու փոխարեն:
- Պլաստիկ աղբը (շշեր, տարաներ, կտրված իրեր) նետեք համապատասխան աղբամանների մեջ:
- Կրճատեք թղթի ծախսը՝ օգտագործելով այն երկու երեսից:
- Սննդային մնացորդները օգտագործեք կոմպոստ պատրաստելու համար, որը լավ պարարտանյութ է բույսերի համար:




ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N 1

Կարող ես մեկ շաբաթվա ընթացքում հետևել, թե Ձեր տանը ինչպիսի և ինչքան աղբ է գոյանում: Քո դիտարկումները ամեն օր ամփոփիր այստեղ.

Օր	Աղբի տեսակը	Քայքայվում է	Չի քայքայվում	Քանակ (հատ, կգ, տուփ)	Նշումներ
1					
2					
3					
4					
5					
6					
7					

Դասընկերներով համեմատեք ստացված արդյունքները: Վերջում դրանք ամփոփեք մեկ աղյուսակում և ուղարկեք մեզ _____ էլեկտրոնային հասցեով:

ԱՂԲԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՐԵՔ 3R ԿԱՆՈՆԸ



ԿՐՃԱՏԵԼ
(անգլերեն՝
Reduce)

ԿՐԿԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾԵԼ
(անգլերեն՝
Reuse)

ՎԵՐԱՄՇԱԿԵԼ
(անգլերեն՝
Recycle)

Բնությանը օգնելու համար պետք է հիշենք 3R-ի կանոնը՝ այսինքն հնարավորինս քիչ աղբ գոյացնել՝ խնամքով և վերստին օգտագործելով իրերը, թափոնները՝ թուղթը, մետաղը, ապակին և պլաստիկը հանձնելով վերամշակման, խնայողաբար օգտագործել սպառվող բնական պաշարները՝ ջուրը, անտառանյութը, օգտակար հանածոները, խրախուսել բազմակի օգտագործման տոպրակների կիրառությունը, օրգանական թափոնները վերածել կոմպոստի և այլն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N 2

Տատիկի կամ մայրիկի օգնությամբ, տանը եղած հին հագուստից, կտորներից մի գեղեցիկ տոպրակ կարիր և հետևիք, որ խանութ գնալիս անպայման վերցնեն իրենց հետ:

ամենահեշտ
ձևը



ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՅՐԱՆՈՒՄ Է

Մենք հաճախ ենք լսում երկրագնդի այս կամ այն անկյունում տեղի ունեցող բնական ահավոր աղետների՝ թայֆունների, ջրհեղեղների, երաշտի, սողանքների մասին: Դրանք ավելի ու ավելի հաճախակի ու սաստիկ են դառնում: Առաջին հայացքից այդ երևույթները միմյանց հետ կապ չունեն, բայց իրականում դրանք բոլորը փոխկապակցված են և, արդյունք են երկրագնդի վրա կլիմայի փոփոխության: Իսկ կլիման փոփոխվում է մարդու գործունեության արդյունքում՝ օդի, ջրերի և հողի աղտոտման, թունավոր նյութերի արտանետման հետևանքով:



Տեղական լուծումները կարող են նպաստել մեր երկրագնդի առողջացմանը



ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Ծագող արևի երկրում թղթի թափոնը՝ մակուլատուրան, սկսել են մշակել դեռ 11-րդ դարում: Ճապոնացիները մոր կաթի հետ սերմանում են աղբին հարգանքով վերաբերվելու գիտելիքներ ու կանոններ: Այդ երկրում ամեն քայլափոխի փակցված են բազմաթիվ «շնորհակալություններ», որ աղբը տարբերակում եք, հետո գցում համապատասխան աղբարկղը, բայց՝ «ամհթ», եթե հակառակ կերպ եք վարվում: Այդ երկրում առանձնացնում են աղբի 50 տեսակ: Ճապոնիայում աղբի վերամշակման 2000 գործարան կա: Ճապոնիայի իշխանությունները գրավիչ ու գեղեցիկ տեսք են տալիս այդ գործարաններին ու շրջակայքին: Դրանք ոչ ներսից, ոչ էլ դրսից տհաճ հոտ չեն արձակում, շենքերը թափանցիկ ապակիներից են կառուցված, որպեսզի մարդիկ տեսնեն, թե ինչ ջանքեր են գործադրվում՝ իրենց թողած աղբը վերամշակելու համար: Աղբ մշակող գործարաններով ճապոնացիները հպարտանում են. դրանք նաև զբոսաշրջության վայրեր են:





ՖՐԱՆՍԻԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Գիտե՞ք արդյոք, որ Ֆրանսիայում աղբը տեսակավորում են 90-ականներից սկսած: Յանկանու՛մ եք իմանալ, թե ինչպես են դա անում: Շատ հեշտ: Նրանք ունեն թափոնների առանձին տարաներ, որոնք գույներով տարբերվում են միմյանցից: Մեկը վերամշակելի փաթեթավորման համար է, մյուսը ոչ վերամշակելի թափոնների համար, և վերջինը, օրգանական թափոնների համար: Ապա, թափոնները տեսակավորվում են և վերամշակման արդյունքում վերածվում են հագուստի, գրիչների, համակարգիչների և այլն:

Գիտե՞ն արդյոք, որ

$$27 \times \text{[water bottle]} = \text{[sweater]}$$

27 պլաստիկ շիշ = 1 վերնագգեստ

$$670 \times \text{[red can]} = \text{[bicycle]}$$

670 թիթեղյա տարա = 1 հեծանիվ

Այն աղբը, որը մեծ չափերի պատճառով չի տեղավորվում աղբամանների մեջ, տեղափոխվում է թափոնների հավաքման կենտրոնում: Թափոնների հավաքման կենտրոնում վերամշակվում է այն աղբը, որն արգելված է նետել աղբամանը, օրինակ՝ բազկաթոռ, մեքենայի յուղ, ներկեր, մարտկոցներ և այլն:

Ֆրանսիացիները համացանցով վաճառում են իրենց իրերը՝ հեծանիվներ, հագուստ, գրքեր... Դա շատ լավ տարբերակ է իրերը նորից օգտագործելու, աղբը նվազեցնելու և գրպանի գումարը խնայելու համար:




ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N 3

Այս նամակում գրվածի մասին պատմի՛ր առնվազն հինգ հոգու և բացատրիր, թե պլաստիկ թափոնները տարանջատելով ինչպես կարող ենք նպաստել, որ մեր մոլորակը նորից ժպտա:



Այդ մասին նշումներ կատարիր հաջորդ էջում և էլեկտրոնային նամակ գրիր _____ հասցեով:



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ուրբան հիմնադրամը,
և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: